



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

թիւ 23.

ՊԼԵՏՕՆԱՎԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԻ

# ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ՔՍԱՆԵՐՆՔԵՐՈՐԴ

14 ՄԱՅՈՒ 1871



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Թ. ՄԻԻԷԷՆՏԻՍԵԱՆ

— 1871 —

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ԲԱՑՈՒՄ 1870 ԱՄԻՆ

Ն Ի Ս Տ Ի Գ .

14 Մ Ա Յ Ի Ս 1871 .

ՆԱԽԱԳԱՀ . — ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԲ

ԱՏԵՆԱՊԵՏ . — Ս . ԱՂԱԲԷԿԵԱՆ ԷՖԷՆՏԻ .

## ԿԱՐԳ ԽՆԴՐՈՑ

- 1° Ընդունելութիւն ատենագրութեան նախընթաց ԻՖ. Նիստին .
- 2° Վաւերացում ընտրութեան նոր երեսփոխանաց :
- 3° Վերանորոգում 1/5 մասին Ընդհանուր ժողովոյ :
- 4° Ատենական կանոնագրութիւն :
- 5° Տարեկան համարաառութիւն Ազգային Վարչութեան :
- 6° Վերաքննութիւն Սահմանագրութեան :

Ք. Ատենապետ Ստեան էֆ. բացակայ ըլլալով,  
Բ. Ատենապետ Աղաբէկեան էֆ. ժամը 6 5/4 ին  
ատենը կը բանայ 'ի ներկայութեան 40 ե-  
րեսփոխանաց, որոց թիւը 'ի վերջոյ 68 ի  
յանդեցաւ .

Ատենապետ էֆ. օրուան խնդրոց կարգը ձեռք  
առնելով, հրաւիրեց զերեսփոխաններն որ նա-  
խընթաց նիստի ատենագրութեան վրայ զիտո-  
ղութիւն՝ եթէ ունին՝ ընեն .

1° ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ  
ՆԱԽԸՆԹԱՑ ԻՖ. ՆԻՍՏԻՆ .

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՖ. — Երես 326 սիւնակ  
ա. իմ խօսքիս վերջին պարբերութիւնը սապէս  
պիտի ըլլայ . « Թէ եւ ժողովոյս պարտքն է  
« պաշտօնական կերպով դատ պահանջել, բայց  
« եւ այնպէս ինչ հարկ կայ դատ բանալ, բա-  
« լական է որ Ռուսիսեան էֆ. ի կողմէն Երես-  
« փոխանական ժողովոյն եղած անարգանքը ժո-  
« ղովով իրեն դարձնեմք, եւ ասով այս խնդիրը  
« կը վերջանայ » .

Նոյնպէս՝ Երես 327 սիւնակ ա. խօսքիս կար-

գը զրոված էնէնէ՛ բառը իմա չ'է . անոր տեղ  
պիտի ըլլայ — « Եւ համարուէր : Միեւնոյն խօս-  
քիս վերջը պիտի աւելնայ նաեւ սա հետեւեալ  
պարբերութիւնը . « որովհետեւ գրաւոր եղած  
« այս հայնոյութիւնը կրնայ չորս հազար տա-  
« ռիէն ետքն ալ մեր սերունդը կարդալով ի-  
« մանալ եւ պատմութիւնը սխալ տեղեկութիւն  
« տայ անոնց, ուստի ԻԱ. Նիստին ատենագրու-  
« թիւնը չ'օչնչացնելէ զատ պէտք է նաեւ նո-  
« բա հերքումն ալ հրատարակել, որպէս զի ա-  
« պագան կարող ըլլայ ամեն բան իւր պարա-  
« գաներովն իմանալ » .

Այս դիտողութենէն ետքը թէ եւ անմիջա-  
պէս ուրիշ դիտողութիւն ընող ոք չ'եկաւ ե-  
րեսան, սակայն ըստ որում դեռ ժողովակա-  
նաց մեծագոյն մասը չ'էր գոյացած, Ատենա-  
պետ էֆ. ԻՖ. Նիստի ատենագրութեան վաւե-  
րացումը կախ թողլով՝ անցաւ հետեւեալ խնդ-  
րոյն .

2° ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ 1/5 ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ  
ԺՈՂՈՎՈՑ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ժողովոյս երկտարեկան







« ծը Ընդհանուր Ժողովոյս մէջ կատարուի :

Ժողովը գո՛ւ ըլլալով այս ձեւէն, Ատենապետ էֆ. քուէի դրաւ զայն եւ ընդհանուր հաւանութեամբ ընդունուեցաւ :

3. ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Դժբախտաբար դեռ պատրաստ չ'է ատենական կանոնադրութեան ծրագիրը, զոր Օտեան էֆ. բերել խոստացած էր, եւ ինչպէս իւր պահ մ'առաջ կարդացուած նամակէն տեղեկացաք, այժմ ալ ճամբորդելու վրայ է ինքն, ուստի այս խնդիրն առ այժմ կը մնայ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Մինչեւ ե՞րբ պիտի սպասենք ատենական կանոնադրութեան . կարծեմ այս երեսփոխանութեան դարուն մէջ չը պիտի կրնայ պատրաստուիլ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Հարցում մ'է այս, որ կ'արձանագրուի :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Միայն արձանագրութեամբ զո՞ն չ'եմ ըլլար, պատասխան կ'ուզեմ :

Տ. ԱՄԲՐՈՍԻՈՍ ՎՐԴ. — Որովհետեւ խոստացողը ճամբորդելու վրայ է, կ'ըսէք, անոր վերադարձին սպասել երկար կ'ըլլայ. Գիււանին միւս անգամոց կը մնայ այս կանոնադրութեան ծրագիրը պատրաստել :

Գործադիր Յանձնաժողովոյ Ատենապետը նոր ընտրութեանց տեղեկագիրը բերած ըլլալով, Ատենապետ էֆ. նոյն խնդիրը ձեռք կ'առնու :

4. ՎԱԻԵՐԱՑՈՒՄ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԵՐԵՍՓՈՒԱՆԱՅ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Երեսփոխանական ընտրութեանց Գործադիր Յանձնաժողովոյ կողմէն հետեւեալ տեղեկագիրն եկած է, ժողովոյս ներկայանալու համար :

Ամեն. Սրբազան Պատրիարք Հայր . եւ այլն Ազգային երեսփոխանական վերջին ընտրութիւնները վաւերանալէն ետքը՝ հետեւեալ ընտրութիւններն ալ կատարուած են, զորս Ընդհանուր Ժողովոյդ վաւերացմանը ներկայացնելու պատիւն ունի Յանձնաժողովս :

Քարակէօմրիւկի թաղին երեսփոխաններէն մեծ. Տօքթ. Ռափայէլեան էֆ. երեսփոխանութեան

նէ ըստ օրինի հրաժարած ըլլալուն, Ընտրողական ժողով կը կազմուի եւ ապրիլ 25ին քուէարկութիւն եւ քուէհամար ըլլալով, 170 ընտրողներէն միայն 17 քուէարկուաց 12 քուէով այսինքն ըստ օրինի բացարձակ առաւելութեամբ՝ երեսփոխան կ'ընտրուի,

Մեծ. Գասպար էֆէնտի Երլտրզեան :

Երզնկայու Առաջնորդ արժ. Գրիգորիս Վարդապետ Ալէաթեան, ապրիլ 15 թուական նամակաւ մը կը տեղեկագրէ թէ՛ Կամախ, Բաբերդ, Կերջան եւ Երզնկա, այս չորս միացեալ վիճակներն 250 ընտրող ունենալով ըստ հրահանգի Գործադիր Յանձնաժողովոյս՝ քուէարկութիւն կ'ընեն եւ 119 քուէով այն է համեմատական առաւելութեամբ՝ երեսփոխան կ'ընտրուի,

Մեծ. Գրիգոր էֆէնտի Բէնիքճեան :

Ռոստոթոյի Առաջնորդ Կեր. Թադէոս Սրբազան եւ ժողովականք, ապրիլ 25 թուական նամակաւ կը տեղեկագրեն թէ՛ Գաւառական Ընդհանուր Ժողով կազմելով 23 քուէից բացարձակ առաւելութեամբ երեսփոխան ընտրուած է,

Մեծ. Մկրտիչ էֆէնտի Տամատեան :

Գործադիր Յանձնաժողովոյս հրահանգին մէջ՝ Մարաշ, Զէյթուն, Հաճըն եւ Ֆըրնըզ միացեալ մէկ երեսփոխան ունէին տալու :

Ասկից առաջ Հաճըն իր երեսփոխանն ընտրեց ու վաւերացաւ : Այս ընտրութեան տեղեկագրին մէջ Մարաշ, Զէյթուն եւ Ֆըրնըզ յիշուած չ'էին, որով Գործադիր Յանձնաժողովս կարծեց թէ՛ ինչպէս չատ մը միացեալ գաւառներու տեղական դժուարութեանց պատճառաւ՝ անկարելի էր միանալ եւ հետեւաբար անոնց զըխաւոր քաղաքը միայն կ'ընտրէր յանուն միացեալ գաւառի, այնպէս ալ Հաճըն տեղական դժուարութեանց պատճառաւ՝ յանուն Մարաշի եւ այլն միացեալ գաւառաց ընտրած է իր երեսփոխանը . բայց ապրիլ 23 թուական նամակաւ այս անգամ տեղեկագիր մը ստացանք Մարաշու Առաջնորդէն, քահանաներէն ու ժողովականներէն ստորագրեալ, որք կ'ըսեն թէ՛ Հաճըն, Ֆըրնըզ եւ Ուլիա՝ միանալով Մարաշի հետ՝ երեսփոխան ընտրած են Մարգար էֆէնտի Միքիմանեանը . ուրկէ կը տեսնուի երկու ապօրինաւորութիւն, նախ՝ Հաճըն երկու անգամ եւ երկու անձ երեսփոխան տուած կ'ըլլայ, եւ երկրորդ՝ միացեալ գաւառը կը բաժնուի եւ գաւառական երեսփոխանաց ընդհանուր բաշխման ցանկը կ'եղծանի :

Արդ՝ ինչ որ ալ ըլլայ՝ վերստին ընտրութիւնն ապօրինի կը գտնէ Յանձնաժողովս, վասն զի մի եւ նոյն ընտրողը՝ այն է Հաճըն՝ մի եւ նոյն իրաւունքը երկու անգամ գործադրած է, առանց մէկն զմիւսը ջրելու . բայց որովհետեւ Մարաշ, Զէյթուն եւ Ֆըրնըզ իրաւունք ունին երեսփոխան մը տալու եւ Հաճըն լռելեայն յանուն այս գաւառներուն երեսփոխան մը ընտրած էր եւ այդ ընտրութիւնն ալ վաւերացած, ուստի Յանձնաժողովս՝ աւելի նուիրական գտնելով առանց իրաւունքը՝ նախապատիւ կը համարի ուրիշ անօրէնութեամբ մը այս երեք գաւառներն ուրիշ յարմարաւոր գաւառի մը հետ միացնել, քան յանուն ձեր գաւառին երեսփոխան մ'ընտրուած է ըսելով՝ զանոնք ընտրութեան իրաւունքէն զրկել :

Ուստի Յանձնաժողովս Ընդհանուր Ժողովոյդ կը դիմէ, առաջին ընտրութիւնները վաւերացընելու եւ վերջին ընտրութիւնն անվաւեր հրատարակելու խնդրանք :

Մնամք Ձերում եւն. (Սորբ.) Յ. ԱՐԵԱՆ. Օ. ԽՈՋԱՍՏՐԵԱՆ 1871 Մայիս 14

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Նախ Քարակէօմրիւկի թաղէն եղած ընտրութիւնը, որ Գ. վիճակաւ վերանորոգման տակ ինկած թաղերէն մէկն է, չ'ենք կրնար վաւերացնել, եթէ ճշգրտութիւն պահել ուզենք :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Քիչ մ'առաջ այն խնդիրը լուծուեցաւ, զորմաղիր իշխանութեան յանձնուելով . հիմա այս նոր ընտրութիւնները վաւերացնելէ զատ զորմ չ'ունինք :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Քիչ մ'առաջ խիստ մծտ օրերու մէջ ընտրուած երեսփոխաններ կան ըսուեցաւ . եթէ այս ընտրութիւնը պիտի ընդունինք՝ զանոնք ինչո՞ւ մերժենք :

Իսկ Հաճընի եւ Մարաշի երեսփոխանաց ընտրութեան գալով ըստ որում Ընդհանուր Ժողովը ըրած չ'է գաւառական երեսփոխանաց բաշխումը, այլ կարծեմ Գործադիր Յանձնաժողովը գործակցութեամբ Քաղաքական Ժողովին կարգադրած է զայն, իրենց կը մնայ պէտք եղածն ի գործ դնել այն մասին :

ԽՈՋԱՍՏՐԵԱՆ Օ. ԷՖ. — Ժողովը դեռ այս ընտրութիւնը չը վաւերացուցած՝ վերանորոգման խնդիրը լուծեց . արդ՝ ըսենք թէ Քարակէօմրիւկ 4 երեսփոխան պիտի տար, անաւասիկ մէկը հիմա կուտայ, երեքն ալ վերջը : Իսկ գաւառական երեսփոխանաց բաշխումն արդէն

Ընդհ. ժողովը ընդունած է, եւ այս խնդրոյն մէջ սկզբունքի նկատմամբ տարբերութիւն մը չը կայ :

ՊԵՂԵԱՆ Թ. ԷՖ. — Ես Օղսէն էֆ.ի հակառակ կը կարծեմ թէ՛ չ'ենք կրնար այժմէն Քարակէօմրիւկինը իբր ընտրուելիքներէն մէկը ընդունիլ . քանի որ Քարակէօմրիւկի երեսփոխանք վիճակահանութեան օրինօք հրաժարած կը համարուին, կ'ուզէ նոր ընտրուած ըլլան, կ'ուզէ հին, մենք օրէնքը պէտք է գործադրենք :

ԽՈՋԱՍՏՐԵԱՆ Օ. ԷՖ. — Սխալ հասկըցաք իմ ըսածս . ժողովը քիչ մ'առաջ որոշած էր վերանորոգման խնդիրը, երբ Գործադիր Յանձնաժողովը իր տեղեկագիրը բերաւ . ուրեմն Քարակէօմրիւկի այս նոր ընտրութիւնը վաւերացնել ժողովոյ որոշման ընական հետեւանքն է :

ԵՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՖ. — Կարծեմ թէ այս խնդիրն այնչափ դժուարութիւն չը պարուենակէր որչափ որ երեւակայել կ'ուզուի : որովհետեւ ժողովը արդէն որոշեց 15 մասին վերանորոգումը կատարել : Թէեւ ոմանք առարկեցին թէ ինչո՞ւ մինչեւ ցայսօր ես մնացեր է այս վերանորոգումը, եւ մինչեւ իսկ կատարենք ալ յարուցին, բայց Ատենապետը էֆ. խիստ քաջ պատասխանեց եւ կատարեց յոյսը : Օղսէն էֆ.ի առաջարկութիւնը օրինաւորութեան համաձայն է . կարծեմ ոչ միայն Քարակէօմրիւկի նորընտիր երեսփոխանն օրինաւոր է եւ վոլիտութեան անկարօտ, այլ եւ վերստին ամենի ի վեր ընտրուած երեսփոխաններն ալ կրնան նորընտիր համարուիլ եւ անվոլիտ մնալ . ուստի վոլիտակ երկար վիճաբանութիւններ ընելու՝ այս կէտին ալ չը յուղենք եւ յանձնենք Գործ. Յանձնաժողովին, որ Քարակէօմրիւկի մասին եղած դիտողութիւնն ալ քննէ եւ տեղեկագրէ ժողովոյս : Իսկ Մարաշի, Զէյթունի եւ Ֆըրնըզի երեսփոխանին ընտրութեան գալով՝ քանի որ ասկէ առաջ Հաճընէն եկած տեղեկագրին մէջ ծանուցուած չ'էին այս միացեալ վիճակները, ըսել է թէ այն կէտը մեր ամենուն ուշադրութիւնէն վրիպեր է, եւ որովհետեւ Հաճընի կողմէն ընտրուած երեսփոխան մը կայ արդէն, որուն ընտրութիւնը վաւերացեալ է, եւ որովհետեւ անանկ ժամանակի մը մէջ ենք՝ որ Սահմանադրութիւնը վերաքննութեան տակ ինկած է, ուստի կը պարտաւորինք մերժել յիշեալ միացեալ վիճակաց երեսփոխանը նւ զանոնք ուրիշ գաւառի մը հետ միացնելով նոր երեսփոխան մը ուղել :

Մերեան կը ձայնակցին Եռասուֆեան էֆ.ի առաջարկութեան :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՑ. — Քարակէօմրիկի նոր ընտրուած երեսփոխանի մասին Յգսէն էֆ.ի ըրած առաջարկութեան համամիտ կ'ըսեմ թէ՛ զեւ եւս ընտրութիւնը չը վաւերացեալ երեսփոխան մը չ'ենք կրնար հրաժարեցնել Իսկ փետրուար ամսէն ՚ի վեր ընտրուած երեսփոխանաց զայով, ըստ որում Գ. վիճակի վերանորոգումը փետրուարի մէջ որոշուած չ'էր, չ'ենք կրնար զանոնք նորընտիր երեսփոխան համարել, եւ եթէ անոնք յատկապէս Գ. վիճակին համար ընտրուած ըլլային, դարձեալ չ'էին կրնար հրաժարելի չը համարուիլ, քանի որ երեսփոխանաց վիճակու որոշուած Գ. մասին հրաժարումը այս նիստին մէջ կ'որոշուի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Գործ. Յանձնաժողովոյ տեղեկագիրը կը յայտնէ թէ ասկէ առաջ Հաճըն՝ Մարաշէն, Փոնըզէն եւ Ջէյխոնէն զատուելով երեսփոխան մ'է ընտրելու եւ հիմա դարձեալ անոնց հետ միանալով ուրիշ երեսփոխան մ'ալ ընտրել է. անսարակոյս այս վերջին ընտրութիւնն ապօրինաւոր է, եւ պէտք է ծանուցանել ըստ այնմ նոյն գաւառին : Արդ Գործ. Յանձնաժողովոյ տեղեկագիրն այս մասը քուէի կը գնեմ :

Ժողովն ընդհանուր հաւանութեամբ ապօրինի կ'որոշէ այն միացեալ գաւառաց ընտրութիւնը եւ Գործադիր Յանձնաժողովոյ առաջարկութիւնը կ'ընդունի :

Յետոյ Ատենապետ էֆ. Քարակէօմրիկի ընտրութեան մասն ալ քուէի գնել կ'ուզէ :

ՊԵՆԵԱՆ Թ. ԷՑ. — Ընտրութիւն մը ներկայացած է մեզ, քանի որ օրինաւոր է պէտք է վաւերացնենք :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՑ. — Ո՛չ, չ'ենք կրնար այս ընտրութիւնը վաւերացնել, քանի որ Քարակէօմրիկի թաղը Գ. վիճակու վերանորոգման տակ ինկած թաղերէն մէկն է :

ԱԼԱՋԱՋԵԱՆ Հ. ԷՑ. — Քանի որ փոփոխելի երեսփոխանք պաշտօնին պիտի շարունակեն մինչեւ ցնոր ընտրութիւնը, այս ընտրութիւնն ալ պէտք է նոյն պայմանու վաւերացնել :

Աւր ուրեմն Ատենապետ էֆ. այս մասն ալ քուէի կը գնէ եւ Քարակէօմրիկի երեսփոխանին ընտրութիւնն օրինաւորապէս կը վաւերանայ :

Նաեւ տեղեկագիրն միւս մասերն ալ քուէի դրուելով նորընտիր երկու գաւառական երեսփոխանաց ընտրութիւններն ալ մասնաւորապէս կը վաւերանան ժողովէն :

5. ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԱՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ :

Եռասուֆեան Տ. էֆ. խօսք կ'ուզէ, յանուն Քաղ. ժողովոյ, համարատուութեան յառաջարան յայտարարը կարդալու համար :

Երեսփոխանաց մէկ մասը կ'ուզէ որ ժողովը քառօրդ մը դադար առնելէ ետեւ կարդացուի ուրիշ մաս մ'ալ դադարէն առաջ մտնել ընել կ'ուզէ :

Ատենապետ էֆ. մեծադոյն մասին կամքն անելով ըստ այնմ խօսք կուտայ Եռասուֆեան էֆ.ին, որ կը կարդայ հետեւեալը :

Ազգային վարչութեան Քաղաքական Ժողովս կը փութայ իւր ստանձնած պաշտօնին համարատուութեան տեղեկագրին հետ միատեղ ներկայացնել նաև իւր հրաժարականը պատկառելի Ատենիդ :

Երեսփոխան էֆէնտիներ, իրաւ է որ Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հօր հրաւիրանօքն այս պաշտօնը յանձն առած ատեննիս, ազգային գործոց օրինաւորութեան մէջ մտնելուն համար աշխատիլը բոլոր ազգայնոց նուիրական պարտաւորութիւնն համարելով, հրապարակաւ խոստացանք շարունակել մեր գործակցութիւնն Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր ազգասիրական անձնուէր ջանիցը, վասն զի կը յուսայինք թէ Ընդհանուր Ժողովս Գործադիր Յանձնաժողովոյ անխոնջ ջանիւքը վերակազմուելէն անմիջապէս ետքը՝ Սահմանագրութեան վերաքննութիւնը երկար ատենի կարօտ չը պիտի ըլլար, եւ երբ ատենաքոր իրաց վիճակը կերպարանափոխ ըլլալով, անհնար իսկ եղաւ գուշակել թէ տակաւին որչափ ատեն պիտի կարենայ տեւել, պարտք համարելինք մեր հրաժարականը տալ : Եւ որովհետեւ Սահմանագրութեան արամագրութեանց թէպէտ եւ ոչ բառական գործադրութեանը այլ հիմնական սկզբանց եւ ոգւոյն համաձայն վարուիլն իսկըզբանէ մեր փափաքն եղած էր, Սահ-

մանագրական տարեդիտոյն սպասեցինք, եւ տհա երեսփոխան էֆէնտիներ, Չեզ կը վերագարձնեմք այսօր այն աւանգը՝ որ ընդհանուրին սիրելի Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր ձեռամբ մեղի յանձնուած էր : Եւ պարտք կը համարիմք շնորհակալ ըլլալ թէ պատկառելի Ատենիդ եւ թէ համայն ազգայնոց ցոյց տուած համակրութեանը, որմէ քաջալերեալ մեր պաշտօնը կրցանք շարունակել մինչև ցայսօր. թէպէտ եւ համարատուութեանց տեղեկագրերը կարգալէ ետքը ինչ որ ալ ըլլայ ձեր դատաստանն եղած անօրէնութեանց մասնաւոր պարագայիցը վրայ, որովհետեւ անաչառ պիտի ըլլայ ձեր դատաստանը, տարակոյս չ'ունիմք որ պատկառելի Ատենիդ վերահասու պիտի ըլլայ մեր պաշտօնն ամենայն հաստատութեամբ ի գործ դրած ըլլալունս :

Քանի որ տեղեկագիրը հրատարակութեամբ երեսփոխանաց առանց հաղորդուելու իրենց դիտողութիւնն անկարելի է իմանալ, պարտք կը համարիմք ներկայ յայտագրով վիճակագրական համառօտ տեսութիւն մը ներկայացնել, 1870 փետրուար 27էն մինչեւ 1871 ապրիլ 30, որ ըսել է 14 ամսուան միջոցի մէջ, վարչութեան ներկայացած գործոց վրայ :

Նախ՝ Դիւանատան տուամբներուն մէջ արձանագրուած ընդհանուր խնդրոց թիւն է 1253, որ հետեւեալ կերպիւ կը բաժնուի .

Հայերէն գաւառական թղթակցութիւն 764  
» տեղական » 215  
» մասնաւոր » 277

Ազգ. Դիւանատունէն ելած գրութեանց թիւն է 1476, այսինքն՝  
Հայերէն թղթակցութիւն 892  
Ցածկերէն » (Ի-Կ-Է) 212

» նամակք առ զանազան պաշտօնատեղիս եւ կուկալս 223  
» հեռագիրք 127  
» վճագիրք 22 } 584

Արդ՝ եթէ Ազգ. վարչութիւնն այս անօրէնութեանց իւրաքանչիւրը մի ըստ մի ոչէ յիշատակել ուզէր, հարկ կ'ըլլար իւր ատենագրութիւններն ամբողջապէս հրա-

տարակել, որն օր ոչ միայն Սահմանագրութիւնը չը տրամադրէր, այլ տարակոյս չը կայ թէ բոլորովին անօգուտ եւ ձանձրալի ընթերցում մը պիտի ըլլար, վասն զի իւրաքանչիւր երեսփոխան պարտաւոր պիտի ըլլար տաժանելի աշխատութեամբ մը փնտուել ատենագրութեանց շարքին մէջ, իւրաքանչիւր խնդրոց վրայ եղած միջանկեալ տնօրէնութիւնները, որպէս զի կարենար իւր դիտողութիւններն ընել : Ուստի վերջին անգամ 1863 թուականին, Ազգ. Ընդհանուր Ժողովոյ ներկայացած համարատուութեան տեղեկագրին եղանակը մեղի առաջնորդ բռնելով, այն սկզբան վրայ Ազգ. վարչութեան բոլոր ճիւղերուն համարատուութիւնը պատիւ ունիմք ներկայացնել :

Ուրեմն, վարչութեան ներկայացած բոլոր խնդիրները վեց դիտաւոր մասանց կը բաժնեմք, եւ ասոնց մէջ Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր եւ իւր խորհրդականին ու փոխանորդին ձեռամբ անօրինեալ աւօրեայ խնդիրները, եւ ընդհանրութեան համար ամենեւին կարելորութիւն չ'ունեցող մասնաւոր խնդիրները մէկգի թողլով, Երեսփոխանական Ժողովոյ ուշադրութեանը արժանի Քաղաքական Ժողովոյ 7/4 նիստերուն մէջ ըրած անօրէնութիւնները հետեւեալ կերպիւ կը ներկայանան .

վարչական տնօրէնութիւնք	18
Հանրական »	33
Գաւառական »	70
Դատական »	11
Թաղական »	7
Մասնաւոր »	17

Այս գումարին վրայ աւելցնելով Դատաստանական խորհրդոց տուած վճիռներուն գումարը, որոյ վիճակացոյցը տեղեկագրին մէջ կը տեսնուի, 235 կ'ընէ ընդ ամենը 394

Պէտք է նշանակել նաև որ Քաղաքական Ժողովոյ տնօրինած 156 խնդրոց մէջ կան անանկ խնդիրներ, որք իրենց մէջ մասնաւոր կէտեր կը պարունակեն, որք թէպէտ եւ առանձին խնդիրներ կրնան համարուիլ, բայց մի եւ նոյն անձին կամ տեղին պատկանեալ ըլլալուն ատարաժամանօր միեւ-



ըր գլխաւոր խնդրոյն հետ միացած են :

Որովհետեւ Քաղ. Ժողովը իւր պաշտօնաւարութեան միջոցին մէջ ըրած բոլոր անօրէնութիւնները՝ պատկառելի Ատենիդ, որ ըսել է Ազգին քննադատութեանը կը ներկայացնէ, հրաման տուէք երեսփոխան էֆէնտիներ, որ ձեր ուշադրութիւնը վայրիկ մի մեր պաշտօնավարութեան միջոցին հանգամանացը վրայ հրաւիրեմք, զորս առանց յիշելու՝ վարչութեան գործքերն առաջառապէս դատել մեզի անհնար կ'երեւի. ուստի անոր անցեալ և արդի վիճակին կարեւոր պարագայիցը վրայ համառօտ տեսութիւն մը ընելն անհրաժեշտ կը համարիմք :

Յայտնի է թէ Ազգ. վարչութեան ղեկը այնպիսի ժամանակի մը մէջ մեզի յանձնուեցաւ, որ Ազգը ահադին փոթորիկէ մը երկրորդ անգամ նոր ազատած նաւու մը նման՝ գրեթէ ամենայն ինչ կորուսած, և մերձակայ նաւահանգիստ մը մտնելու համար՝ ոչ կայմ ունէր, ոչ առագաստ կամ շոգի, այլ մեծաւ մասամբ յուսահատ նաւատիներ, այլ մի միայն հասարակաց համակրութիւնը գրաւած նաւապետ մը, որու անձնուէր ջանից և անկեղծ ազգասիրութեանը վրայ ճանապարհորդաց մեծագոյն մասը յուսալիւր կ'ըստասէին իրենց ազատութեան վայրկեանը :

Ուրեմն Ազգ. երեսփոխանական Ժողովը փորձառութեամբ գիտեր թէ՛ այն միջոցին որպիսի դժուար կացութեան մը մէջ կը գտնուէր վարչութեան պաշտօնը, ինչպէս որ մենք զայն ստանձնած ատեննիս գիտէինք թէ ինչ աստիճան անձնուիրութեան և զոհողութեանց կարօտ էր. բայց այնպիսի ժամանակի մը մէջ, որ Սրբազան Հոգիկը զմեզ յօգնութիւն կը կոչէր, որչափ ալ մեծ ըլլար պատասխանատուութիւնը՝ անհնար էր մեզ մերժել մեր գործակցութիւնն ազգային նաւը մերձակայ նաւահանգիստը տանելու համար, որ էր Սահմանադրութեան վերաքննութիւնը :

Արդ՝ սոյն հանգամանքներով շրջափակեալ առ ժամանակեայ պաշտօնավարութիւն մը մեծ արիւթեան կը կարօտէր, իւր գէշմն

ելած բոլոր խոչնդոտներուն յաղթելու համար, որք իւր ամեն քաղաքիսին զինքը պիտի արգիլէին վարչութեան այն անկերպարան վիճակին մէջ, ուր բնականապէս մղած էր Սահմանադրութեան վերաքննութեան անհեթեթ եղանակէն ծագած անիշխանութիւնը :

Թէպէտեւ Սահմանադրութեան հիմնական սկզբանց և իւր ոգւոյն տրամադրութեանց յարգուելուն վարչութեան կողմանէ հրատարակուիլը՝ ընդհանուր առմամբ Ազգին վիճակին վրայ իւր օգտաւէտ ազդեցութիւնն ունեցաւ, սակայն ժողովուրդն անխորձ ըլլալով նոյն իսկ Սահմանադրութեան ոգւոյն, և անոր բաղմամբայ դադարման պատճառաւ անկարելի էր որ կարենար ըստ արժանոյն ըմբռնել իրաւանց և պարտեաց գործադրութեան եղանակը, որով շատ անգամ անհիմն և սնտախ վէճեր մեծ կերպարանք կ'առնէին թէ՛ մայրաքաղաքիս մէջ և թէ՛ դաւառները, և անով Սահմանադրութիւնն չ'ազդէր տակաւին ժողովրդեան մէկ դասին այն կատարեալ ապահովութիւնն և ոչ իսկ այն ակնածութիւնը՝ որք համոզմամբ և փորձառութեամբ միայն պիտի կարենան յառաջ գալէւ յայտնի է թէ առանց համազման և փորձառութեան ամենէն սքանչելի օրինակիւրքը փիլիսոփայական երազ մը միայն կը համարուի :

Թէպէտեւ մեր Ազգ. վարչութեան նախնի եղանակն ի սկզբան լռելեայն տեղի տուաւ սահմանադրական գրութեան, բայց բնական էր որ հին գրութեան վերջին վայրկեաններն և սահմանադրական մեքենային գործադրութեան նախնական շարժումները միանգամ և եթ իրարու հետ պիտի մրցէին, և այս մրցման միջոցին եթէ հին գրութիւնը պահ մ'ալ յաղթանակէր, իւր յաղթանակն ուրիշ բանի չ'էր կրնար ծառայել, եթէ ոչ նոր գրութեան հաստատութիւնն աւելի մօտեցնելու :

Ուրեմն Ազգը տակաւին չ'ըսթափած 1860ի պատահարին տխուր ազդեցութենէն, ահա 1866ի հարուածը կը հասնի, որ դժբաղդարար բուն իսկ սահմանադրական

նաց հեղինակութիւնն համարուելով, աւելի ահաւոր կ'ըլլայ իւր ազդեցութիւնը և մնասակար իւր հետեւանքը :

Որովհետեւ նպատակնիս ոչ ոք դատել կամ ոչ զտք ամբաստանել է, այլ միայն յիշել այն պարագայներն որով ի մօտոյ շրջապատեալ էր Ազգ. վարչական մարմինը՝ մեր ձեռքը յանձնուած միջոցին, պարտաւոր եմք յաւելուլ թէ՛ պետական հարուածին սահմանադրականաց կողմանէ եղած գործակցութեան յանցանքը՝ աւելի ժամանակին բերմանցը վրայ բեռնաւորել կ'ուզեմք քան թէ անձանց : Թէ և անով իրենց այս սխալմունքը չ'արդարանար, բայց ո՞վ արդեօք սխալական չ'է Տեառք, ամենէն մեծ քաղաքազէտներն իրենց սխալները համբարած են : Անուրանայի ճշմարտութիւն մ'է թէ իրենք ուրիշ դիտաւորութեամբ ճամբայ են ելած, և իրենց դաղափարին բոլորովին հակառակ արդիւնք մը երեւան եկած է : Փոթորկալից հորիզոնով շրջապատեալ կնճռոտ խնդրոց շարք ս'ը, ահագին ամպերու նման այնպիսի սրընթաց վայրկեաններով իրարու վրայ դիզուեր են, որ օրուան պիտոյքը՝ որ վարչական մեքենային սլաքը իւր գործողութեանց կեդրոնէն խոտորեր է :

Վերջապէս յեղափոխութեան պէտքը թող տարով ամեն տեսակ ղեղձմանց, անիշխանութիւնը կը տիրէր պատրիարքական աթոիճանի պաշտօնատարք՝ եկեղեցական թէ աշխարհական՝ վարժեր էին ինքնազուլիս թափառիլ և ըստ հաճոյից գործել, ոչ համարատու կար և ոչ համարառու, վասն զի երեսփոխանութիւնը կը քննարար :

Ազգ. վարչութիւնը նկատելով որ իրաց այս վիճակը բնական հետեւանք մ'էր անիշխանութեան ցառայի օրերուն, և որովհետեւ տարակոյս չը կայ որ քաղաքական իրաւունքէ երկար տոնն զրկուած ժողովրդեան մը այդ իրաւունքը տրուած ժամանակը՝ ճշմարտամ մըն է, ճշմարտամ մը՝ ընդհանրապէս կարեւոր բայց միշտ վտանգաւոր, որոշեց չը վարանիլ երբէք հաստատամտութեամբ ի գործ դնել իւր պաշ-

տօնը, սահմանադրական սկզբանց համեմատ, որ և իցէ պարագայի մէջ՝ ուր իւր պարտաւորութիւնը նախագծեալ էր :

Վարչութեան պարտականութիւնը կը պահանջէր ուրեմն, ամեն բանէ առաջ Պատրիարքական իշխանութեան բոլոր ճիւղերն օրինաւորութեան մէջ մտցնելու աշխատիլ, և ահա այս պատճառաւ՝ երբէք չը ճգնեցաւ ամեն կարծիքները հաւասարապէս դռն ընել, այլ իւր սկզբան համեմատ՝ ջանաց միշտ իւր անօրէնութիւնները Սահմանադրութեան ոգւոյն համաձայնեցնել, բոլոր ուղղադատ և արդարասէր ազգայնոց անձնական կարծեաց ազատօրէն արտայայտութեանը տեղի տալով, որով միայն կը յուսար ընդհանրութեան համակրութիւնը հրաւիրել վերաքննեալ Սահմանադրութեան վրայ, որ քիչ ատենէն երեսփոխանական Ժողովոյ շնորհիւր՝ Ազգին թէպէտ և միշտ վերաքննելի բայց անեղծանելի օրէնքը պիտի ըլլար :

Երեսփոխան էֆէնտիներ, ամանք մեղադրեցին թէ ինչո՞ւ Ազգ. վարչութիւնն անտարբեր կը կենայ և իւր անօրէնութեանց վրայ եղած խիստ քննադատութեանց դէմ ինքզինքն չը պաշտպանէր : Եկաւ հիմա ժամանակը այն անձանց պատասխանելու թէ Ազգ. վարչութիւնը համբերեց, որպէս զի կարենայ փորձով ապացուցանել թէ երբ վարչական մարմինն անկեղծութեամբ մի միայն Ազգին օգուտն իրեն սկզբունք ունենալով, և ոչ թէ իւր անձնական կարծեաց յաղթանակը, Սահմանադրութեան օրինաց համաձայն կը շարժի՝ երբէք չը վախար քննադատութենէն, որչափ խիստ որ ալ ըլլայ հասարակաց դատաստանը, վասն զի ժողովուրդը երբէք չը կշտամբեր այն յանցանքներն, երբ գիտնայ թէ սխալման հետեւանք են քան թէ դիտաւորութեանց : Քանի որ քաղաքավարական կանոններն յարգուին և վարչութեան բոլոր ճիւղերուն արժանապատուութեանը դէմ յարձակումներ ընելէ զգուշանան, հրատարակական թերթերու ազատ քննադատութիւնն անհրաժեշտ տարր մ'է սահմանադրական վարչութեան :





**ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՅ.** — Երեսօրհանական իրաւունքս էր հարցնել Սրբազան Նախագահին թէ՛ յանուն Ընդհ. ժողովոյ նամակ մ'եկա՞ծ է արդեօք իրեն դեռ չը հրատարակալ Ա. Ատենադպիր Ռուսինեան էֆ. ի կողմէն: Այս հարցման այո՛ կամ ո՛չ պատասխանով մը մենք կը բաւականանանք:

Սրբազան Նախագահն եթէ ուզէ կը կարդայ եկած նամակը, իսկ եթէ ծանր դէպքի մը յառաջընթացն է այն՝ կրնայ պատասխանատուութիւնն իր վրայ առնելով չը կարդալ:

**ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ.** — Ես կ'առաջարկեմ՝ Օգոսէն էֆ. ի հարցման պատասխան չը տրուած՝ հարցնել ժողովին թէ՛ արդեօք դեռ եւս զՌուսինեան էֆ. Ա. Ատենադպիր կը ճանչէ՞. կը ցաւիմ որ ամբողջ նիստ մը այդ անձին պատճառաւ զոհելէ ետեւ՝ տակաւին դայն Ա. Ատենադպիր անուանողներ կը գտնուին այս ժողովին մէջ. թէ որ արժանապատուութիւն պահելու համար է, ասկէ անդին փոքրոգութիւն չը կրնար ըլլալ:

**Տ. ԵՐԵՄԻԱ ԵՊՍ.** — Ժողովը դեռ դադրեցուցած չ'է զայն իր պաշտօնէն:

**ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ.** — Նախընթաց ԻԲ. նիստի ատենագրութիւնը բովանդակ սպառնալիք մ'է Ռուսինեան էֆ. ի դէմ, որով ժողովը միահամուռ մերժած է անոր ատենագրութիւնն ալ, անոր ատենագրութիւնն ալ կ'առաջարկեմ հարցընել ժողովին թէ՛ արդեօք մերժած է, թէ ոչ:

**Տ. Երեմիա Եպիսկոպոս** ընդմիջելու ուղելով Փափազեան էֆ. ի խօսքը, պատասխանել կ'ըսկսի անոր, եւ այս միջոցին ձայները կը բարձրանան իր եւ Փափազեան էֆ. ի մէջ տեղ, որով վայրկեան մը ժողովին հանդարտութիւնը կը յուզի:

**ՆԱԽԱԳԱՋ ՍՐԲԱՋԱՆ** — Ինծի հարցում մ'ուղուեցաւ, անոր պատասխանելու համար պէտք է ես խօսիմ:

Պատահական առթով մը տեսայ զՌուսինեան էֆ. իւր հրատարականն ու բողոքագիրը կարդաց ինձ եւ ըսաւ. ասոնք քեզ աւանդ կը ձըղեմ, եթէ հարկ տեսնես կարդալ տո՛ւր ժողովին մէջ: Ես հարկ չը տեսի զայն կարդալ տալու, ուստի իւր աւանդն իրեն պիտի վերադարձնեմ: Ահա այս է իմ պատասխանս:

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ.** — Օգոսէն էֆ. կրնայ բաւականանալ այս պատասխանով, զի այո՛ կամ ո՛չ պատասխան մ'էր միայն իր ուղածը:

**ԵՌԻՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՅ.** — Սրբազան Նախագահ չոր տուած պատասխանը ամեն բան կտրեց վերջացուց: Կարծեմ մեր ըրածը կանոնապահութեան դէմ է, ամեն անգամ որ մէկը խնդիր մը կը յարուցանէ, մեր կարծիքը յառաջացնելու ուղելով ուրիշին խօսքին կը միջամտենք: Թէ եւս Փափազեան էֆ. ի համակարծիք եմ, սակայն հակամէտ չ'եմ այն ընթացքին՝ որով Օգոսէն էֆ. ի խօսքէն յառաջ անցնի կ'ուղէր: Եթէ ատենական կանոն մը դեռ չը կրցինք ունենալ, գոնէ

կարդապահութեան մը հետեւելով՝ առաջին խօսք ուղղորդել թոյլ տանք իր խօսքը լինցնելու:

**ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ.** — Դիւանը միայն իրաւունք ունի երեսօրհանաց աղդարարութիւններ ընելու. ուրիշ կողմէ՛ եղածներուն պարտական չ'եմ ականջ կախելու:

**Տ. ԵՐԵՄԻԱ ԵՊՍ.** — Նախընթաց նիստին մէջ ժողովը կամք յայտնեց թէ Ռուսինեան էֆ. ներկայանայ եւ իր փաստերն՝ եթէ ունի՝ հաղորդէ. արդ՝ առանց իրմէ պատասխան առնելու դայն հրատարակ հոչակել բռնութիւն մ'է: Եւրօպիոյ մէջ ալ երբ մէկը պիտի դատապարտուի, նախ քննութիւն կ'ըլլայ, անոր փաստերը կը լսուին, եւ յետոյ վճիռ կը տրուի: Ես ալ երեսօրհան մ'եմ, օր մ'ալ ինծի դէմ կրնայ ըլլալ ասանկ բռնութիւն մը, որուն համար կը բողոքեմ միշտ: Եթէ Ռուսինեան էֆ. ի գրածը հրատարական է, թող կարդացուի եւ օրինաւոր կերպով ընդունուի իր հրատարականը:

(Իրիշեւ ընդէն է շէնի.)


**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ.** — Տ. Երեմիա Եպ. ի շփոթութիւնը կարծեմ Փափազեան էֆ. ի խօսքը չը հասկընալէն յառաջ եկաւ, եւ այս պատճառաւ իր հանդարտութիւնը պահ մը կորսնցուց, թէ եւ առաւել հանդարտ խօսելու օրինակ չ'իներու էր ինքն. ուստի շփոթը բառնալու համար հարկ կը համարիմ բացատրել թէ՛ որ եւ է երեսօրհան իրաւունք ունի հարցում մ'ընել եւ խնդիր մը յարուցանելու. այս իրաւամբ վարուեցան Օգոսէն եւ Փափազեան էֆ. ներք: Փափազեան էֆ. հարցընել ուղեց թէ՛ երբ Ատենադպիր մը ժողովին մէջ չ'ըսուած ու չը լսուած նախատական պարբերութիւններ կ'անցընէ ատենագրութեան մէջ, իր պաշտօնէն կիցնայ արդե՞օք, թէ ոչ. ասի խնդիր մ'է զոր կրնանք յուզել, եւ եթէ ժողովն ուզէ ինդրոց կարգը կ'անցնի եւ եկող նիստին անոր վրայ կը վիճարանինք:

**Տ. ՅՈՎՀԱՆՆԵՍ ԲՋ. ՄԿՐԵԱՆ.** — Ամեն Ս. Պատրիարք Հայրն յայտնեց թէ Ռուսինեան էֆ. հրատարական եւ բողոքագիր յանձնած է իրեն, զորս ես պիտի դարձնեմ, ըսաւ. արդեօք Ընդհ. ժողովոյ ուղղեալ բողոքագիրը միայն թէ հրատարականն ալ ՚ի միասին ես պիտի դարձնեմ: Եթէ նորին Սրբազնութիւնն հաճի այս կէտը բացատրել, հրատարականի խնդիրն ըստ ինքեան կը լուծուի:

**ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՅ.** — Արդէն Ռուսինեան էֆ. պաշտօնապէս ամբաստանուած է, քանի որ Ա. Ատենապետ էֆ. կը բողոքէ անոր դէմ, իր ստորագրութիւնը կրող ԻԱ. նիստի ատենագրութիւնը իրեն չը ցուցած տպագրութեան յանձնած ըլլալուն համար:

Որոշեալ ատենը լրացած ըլլալով, Ատենապետ էֆ. ատենը գոցեց ժամը 10ին:

ԱՏԵՆԱՊԵՏ Ա. ԱՂԱԲԷԿԵԱՆ  
ԱՏԵՆԱՊԵՏ Գ. Հ. ՄԷՐԵՆՄ-ԳՈՒԼԻ



ԳԻՆ Զ ՂՐՈՒՇ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱՋԳԱՅԻՆ ՍՆՑՈՒԿԻՆ

Կը ծախովի ի Ղիւ.անատան Պատրիարքարանի . եւ. կը գտովի  
ամեն գրաւածառաց քով ե. կ'կեղեցեաց բանկայնէրը: